Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Պ-260-11.05.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19.6-րդ հոդվածի աղյուսակի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2523 ծածկագրին դասվող ցեմենտի (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքերին դասվող ծածկագրերի) «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» եւ «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչեւ հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ
Պ-260-

11.05.2022-ՏՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (~~այսուհետև՝ Օրենք~~) 19.6-րդ հոդվածի ~~տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ~~աղյուսակի՝

~~*Հոդված 19.6. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ապրանքներ արտահանելու եւ (կամ) ներմուծելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր (կամ դրանց կրկնօրինակներ) տրամադրելու համար պետական տուրքի դրույքաչափերը*~~

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~1. Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արտաքին առեւտրի ոլորտում սահմանափակումների ենթակա ապրանքներ երրորդ երկրներից ներմուծելու եւ (կամ) երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր (կամ դրանց կրկնօրինակներ) տրամադրելու համար~~	~~բազային տուրքի չափով, եթե սույն օրենքով այլ դրույքաչափ նախատեսված չէ~~
2.~~-~~«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2523 ծածկագրին դասվող ցեմենտի (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքերին դասվող ծածկագրերի) «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» եւ «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչեւ հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար	բազային տուրքի ~~900~~200-ապատիկի չափով
~~3. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2603000000 ծածկագրին դասվող պղնձի խտահանք արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների (մինչեւ հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափը)~~	~~բազային տուրքի 160-պատիկի չափով~~
~~4. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2613 ծածկագրին դասվող մոլիբդենի խտահանքեր արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների (մինչեւ հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափը)~~	~~բազային տուրքի 800-պատիկի չափով~~

5. ~~«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7202700000, 8102 ծածկագրին դասվող մոլիբդենի (բացառությամբ 810297000) արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների (մինչեւ հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափը)~~	~~բազային տուրքի 1000-ապատիկի չափով:~~

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող ~~ամսվա 1-ից:~~ օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»»

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-260-11.05.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագրում	Առաջարկվում է նախագծի վերնագրում «Պետական տուրքի մասին» բառերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում «(այսուհետ՝ Օրենք)» բառերը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ Աժ պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածում «հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերը փոխարինել «հոդվածի աղյուսակի» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պետական տուրքի մասին» օրենքի 19.6-րդ հոդվածում առաջարկվում է կատարել երկու փոփոխություն՝ առաջարկում ենք հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու փոխարեն փոփոխություն կատարել հիշյալ կարգավորումներում՝ հոդված 1-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ. *Հոդված 1.* «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19.6-րդ հոդվածի աղյուսակի՝ 1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 2. «Արտաքին տնտեսական գործունեության բազային	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2523 ծածկագրին դասվող ցեմենտի (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքերին դասվող ծածկագրերի) «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» եւ «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչեւ հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար տուրքի 200-ապատիկի չափով 2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:		
5.	ՀՀ ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի 1-ին հոդվածի, 1-ին կետի 2-րդ մաս	Առաջարկվում է «բազային տուրքի 900-ապատիկ բառերը փոխարինել 200-ապատիկ» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	ՀՀ ԱԺ պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող ամսվա 1-ից» բառերը փոխարինել պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է: